Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր	
Ծրագրի անվանումը	011401.10.6 «Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա»
Ընդհանուր նկարագրությունը	Կրթական ծրագիրը կառուցված է հետևալ հիմնական կրթամասերից. Կրթական ծրագիրը կառուցված է հետևալ հիմնական կրթամասերից. • ընդհանուր կառուցամաս, • ընդհանուր մասնագիտական կառուցամաս, • հատուկ մասնագիտական կառուցամաս, • կամընտրական դասընթացներ, • մանկավարժական և մասնագիտական պրակտիկաներ, • ավարտական աշխատանք: Կրթական ծրագրի սահմանված տևողությունը 5 տարի է՝ 10 կիսամյակ, յուրաքանչյուր կիսամյակ՝ 16 շաբաթ լսարանային և 4 շաբաթ՝ քննաշրջան: Կրթական ծրագիրն ավարտվում է ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությամբ:
Ուսումնական պլանը	https://sportedu.am/wp-content/uploads/2026/04/ՖԴԱՖԿ-հեռակա-բակալավր-25-26.pdf
Շնորհվող աստիճանը	Մանկավարժության բակալավր
ՈԱՇ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ
Կրեդիտները	240
Ուսուցման ձևը	Հեռակա
Ծրագրի տևողությունը	5 տարի
Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	450 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

	Ա.1 Ներկայացնելու ընտրած մասնագիտության սոցիալական նշանակությունը, ոլորտում առկա հիմնախնդիրներն ու հայեցակարգերը և գործող իրավական փաստաթղթերը: Ա.2 Բնութագրելու հիմնական, նախապատրաստական և հատուկ բժշկական խմբերում ընդգրկված երեխաների բժշկահոգեբանամանկավարժական, բժշկակենսաբանական, հոգեբանամանկավարժական զարգացման օրինաչա-փությունները՝ տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ: Ա.3 Բնութագրելու ֆիզիկական վարժությունների ներգործության ազդեցությունը օրգանիզմի վրա՝ հիմնավորելով դրանց վերահսկման մեխանիզմները: Ա4. Ներկայացնելու հնարավոր վնասվածքների տեսակները, առաջացման պատճառները և առաջին բուժօգնության կանոնները, առողջ ապրելակերպի բաղադրիչները: Ա5. Նկարագրելու ԿԱՊԿՈՒ և բժշկական հատուկ խմբում ընդգրկված անձանց անհատական ուսուցման պլանի /ԱՈՒՊ/ կառուցվածքի բաժինները և կազմման մեխանիզմները: Ա6. Տարբերակված ներկայացնելու ԿԱՊԿՈՒ անձանց մտավոր, հոգեֆիզիկական առանձնահատկությունները և ուսումնական գործընթացում նրանց հետ աշխատանքի ու սոցիալականացման առանձնահատկությունները: Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտություններ Բ.1 Կազմելու հիմնական, նախապատրաստական և հատուկ բժշական խմբերում ընդգրկված անձանց համար ֆիզիկական վարժությունների տարբեր համալիրներ և համընդհանուր ներառականության պայմաններում ֆիզի-կական դաստիարակության պլանավորման փաստաթղթեր: Բ.2 Կազմակերպելու և իրականացնելու կրթադաստիարակչական և ուսումնական գործընթաց՝ ապահովելով սովորողների բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը: Բ.3 Իրականացնելու մասնագիտական ոլորտի հետազոտություն, ստացված արդյունքների վերլուծում, գնահատում և ներդրում ֆիզիկական դաստիարակության գործընթաց: Բ.4 Կիրառելու հարակից բնագավառներից ձեռք բերված գիտելիքները՝ մասնագիտական ոլորտում առաջացած խնդիրները լուծելու և հետագա գործունեությունը պլանավորելու համար՝ դրսևորելով ստեղծարար-նորարար մոտեցումներ: Բ.5 Գնահատելու ֆիզիկական դաստիարակության գործընթացում ԿԱՊԿՈՒ և բժշկական խմբերում ընդգրկված երեխաների ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների մակարդակը: Բ.6 Կիրառելու ֆիզիկական դաստիարակության գործընթացում այլընտրանքային հաղորդակցման միջոցները՝ հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ երեխաների առանձնահատկությունները: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ Գ.1 Հաղորդակցվել գրավոր և բանավոր՝ մայրենի և օտար լեզուներով: Գ.2 Կիրառելու տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաները (ՏՀՏ) մասնագիտական գործունեության ոլորտում տարաբնույթ ուսումնասիրություններ կատարելիս:

	Գ.3 Մասնագիտական գործընթացում և արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, արդյունավետ պլանավորելու ժամանակն ու հիմնական ռեսուրսները: Գ.4 Իրականացնելու անհատական և թիմային աշխատանք՝ դրսևորելով պատասխանատվություն թիմի անդամների նկատմամբ: Գ.5 Գնահատելու շարունակական կրթության և մասնագիտական զարգացման կարիքները և ինքնուրույն որոշում կայացնել իր հետագա ուսումնառությունը շարունակելու վերաբերյալ:
Աշխատաշուկան	• Նախադպրոցական կրթական հաստատություններ: • Հանրակրթական համընդհանուր դպրոցներ: • Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: • Բարձրագույն ուսումնական հաստատություններ: • Հասարակական կազմակերպություններ, ցերեկային զբաղվածության կենտրոններ, զարգացման կենտրոններ: • Բնակչության համար նախատեսված ֆիզկուլտառողջարարական կենտրոններ: • Մանկավարժական գիտակրթական կենտրոններ: • Մանկատներ, ծերանոցներ: • Ճամբարներ: